ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/2526-24առ «19» 11 2024թ.

«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ
Տնօրեն
Լ. Ջուլակյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-77/24-01/225 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ տիկին Ջուլակյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար պողպատե ճոպանի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-77/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում՝«ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հունիսի 10-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-77/24-01/225 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում»: Սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն:

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:

- 2.1.1 կետ՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հունիսի 10-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-77/24-01/225 պայմանագիրը և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (38 500 ՀՀ դրամ) և որակավորման ապահովումները (57 750 ՀՀ դրամ):

Հարգանքով՝

ԳՏՏ-ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ
Հեռ. 010-20-04-91